

ԽՈՐՍ.Գ.ԽՐԸ՝ ԽՈՐՔՈՒՄ  
ԵՐԿԻՐ ՆԱՅԻՐԻ

(Հայոց համայնապատկերը)

Հայաստանի ամէն մի լեռ  
Մի քարացած հայ է անմեռ,  
Ամէն մի լեռ՝ մի ճղնաւոր,  
Մի իշխան է, մի թագաւոր,  
Առնոս լեռը՝ հովիւ է քաջ՝  
Բըլուրների հօտն իր առաջ:  
Անդոկ լեռը մի մարդարէ՝  
Սիրտը՝ կըրակ, դէմքը՝ քարէ:  
Աչքն աղօթող՝ ծովն է վանայ՝  
Նարեկացին՝ սար Սիրիանայ.  
Վարագեայ լեռն՝ արեւի ամէս  
Քարացել է՝ հայրիկն է վէս.  
Աշնակ սարն էլ, աշնակցիներ,  
Զեղ Մուշ կանչող իշխանն է ձեր.  
Վիհ-Շարան է Արագածը,  
Որ տենչում է Կարսայ հացը.  
Արարատը՝ Հայկն է վիմած՝  
Երեւանւող յոյսի դիմաց՝  
Վար շատ կնայէ մէկ Երեւան,  
Հազար ու մէկ դէպ Մուշ ու Վան.  
Աղնանց փոքը Մըհերն էլ՝ Սիս՝  
Ժայռի մէջ է, վայ աչքերիս,  
Տաւրոս լեռը՝ զիմ Կիլիկիան՝  
Ինքն է Հայոց վերին արքան,  
Ազգ իմ, Գրգուռ, Նեմրութն էլ քո  
Ծովասարն էլ ամպի ներքոյ՝

Վարշամակւած Հայոց վշտով՝  
 Յօնքը կիտել վեհ ու վրդով՝  
 Ասրուշանի կըրակն ընկած  
 Շնչում, ինչպէս թոնդրակն յանկարծ,  
 Խուլ ծխում են, ելք են փնտռում,  
 Մըթընքողը պահ մի պատռում,  
 Արըւռում, նայում Արարատին՝  
 Հուր են ուղում ժայթքել չորս դին,  
 Անդ շղթայւած լեռները վեհ,  
 Իմ աշխարհը, որ երբեւէ  
 Գտն չի դառնայ ժանտ ոսովին  
 Աստւած կ'իջնի գեռ մեր հողին...  
 Միշտ չենք մընայ  
 Ասղատակւած,—  
 Մի՛ պարծենայ,  
 Անըզգամւած...

\* \* \* \* \*

Հայաստանի ամէն մի լեռ  
 Վաղն հըրաբռուխ է մի անմեռ:

Յ. Շիրազ